ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

05.07.2026

Հարգելի՛ հայրենակիցներ

Շնորհավորում եմ բոլորիս Հուլիսի 5-ի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա կապակցությամբ:

Այս պետական տոնը խորհրդանշում է մեր ժողովրդի դարավոր ձգտումն ու անշրջելի կամքը՝ կերտելու ազատ, ինքնիշխան, իրավական և ժողովրդավարական պետություն:

Սահմանադրությունը յուրաքանչյուր անկախ երկրի գոյության, կայունության և հզորության իրավական հենասյունն է: Բայց այն զուտ իրավական փաստաթուղթ չէ, այլ մեր հավաքական արժեքների, համակեցության կանոնների և ապագայի տեսլականի մարմնավորումը:

Մայր օրենքն է այն ամուր հիմքը, որի վրա կառուցվում է ՀՀ պետականությունը: Եվ մեր երկրի կյանքի յուրաքանչյուր ոլորտում Սահմանադրությունը առանցքային դերակատարում ունի: Մայր օրենքով են սահմանվում և պաշտպանվում մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, հստակեցվում են պետական իշխանության թևերի գործառույթներն ու փոխզսպման մեխանիզմները:

Մեկ անգամ ևս շնորհավորելով այս կարևոր պետական տոնի առթիվ՝ մեր հայրենիքին մաղթում եմ հարատև խաղաղություն և առաջընթաց:

Թող օրենքի գերակայությունն ու փոխադարձ հարգանքը դառնան մեր հասարակության մշտական ուղեկիցը:

Թող Հայաստանի Հանրապետությունը շարունակի զարգանալ որպես ժողովրդավարական, ինքնիշխան և իրավական պետություն, իսկ մեր քաղաքացիները վստահությամբ նայեն վաղվա օրվան՝ ապրելով անվտանգ, արժանապատիվ և ստեղծարար միջավայրում: